Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Գորիս քաղաքի 5-րդ ճակատի (տանիքների) ուսումնասիրում ու առաջարկների մշակում

Նախնական տեխնիկական գնահատում

Բովանդակություն

1.Ներածական 3

2.Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը..... 4

3. Վարչական տեղեկություններ 5

4. Վիճակի եզրակացություն..... 6

5. Առկա տեղեկություններ..... 7

6. ՆՏԳ-ի շրջանակը 10

7. ՆՏԳ 11

8. Փաստաթղթավորում 14

9. Նպատակահարմարության վերաբերյալ..... 17

1.Ներածական

Նկ.1. Գորիս քաղաքը

1.1 Երկիրը կամ տարածքը - Հայաստան

1.2 Տեղեկությունները համադրող կազմակերպության անունը -

1.3 Կոնտակտային անուն - Սանամյան Հովհաննես

1.4 էլ-հասցե - hovhannessan@yahoo.com

1.5 Շենքի կամ վայրի անվանումը և հասցեն – քաղաք Գորիս

1.6 Գույքագրման համար(ներ)ը –

1.7 Շենքի/հուշարձանի/վայրի տեսակը

1.8 Կարևոր ամսաթվեր

1850–թթ Վարարակն գետի աջափնյա տարածության վրա սկսվում են Նոր Գորիսի հիմնադրման աշխատանքներ

1870-ական թթ, Բուռն շինարարական գործունեություններ են ծավալվում գավառապետ Ստարացկու ժամանակ Մանուչար-Բեկ Մելիք Հյուսեինյանի ակտիվ մասնակցությամբ և գերմանացի ճարտարապետի կողմից կազմած նախագծով

1869-1877 թթ Շուշի-Գորիս խճուղային ճանապարհի կառուցումը

1885 թ. Գորիսը հռչակվել է քաղաք

1960-ական թթ Գորիսի պատմական տարածքի հարավային մասում ստեղծվում է արդյունաբերական գոտի

1960-ական թվականներից սկսվում է քաղաքաշինական հետաքրքիր հորինվածք ունեցող պատմական կենտրոնի կառուցապատումը: Քանդվում են քաղաքի կենտրոնական մասում գտնվող բազմաթիվ արժեքավոր ճարտարապետական կառույցներ:

1972 թ. «Հայպետնախագիծ» ինստիտուտում մշակվում է Գորիս քաղաքի նոր գլխավոր հատակագիծը

1974 թ.՝ «Հայպետնախագիծ» ինստիտուտում մշակվում է Գորիս քաղաքի մանրամասն հատակագծման նախագծերը

2.Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը

Նոր Գորիսը տարածական ու ոճական, նաև 5-րդ ճակատի (տանիքների) իմաստով մի ամբողջական օրգանիզմ է, որի առանձին կառույցներ միմյանց և շրջապատող բնության հետ խիստ ներդաշնակության մեջ են:

Բոլոր բնակելի և հասարակական կառույցներն ունեին թիթեղյա, հիմնականում քառալանջ տանիքներ՝ ներկված կարմիր գույնով:

Գորիսը շնորհիվ իր բնական դիրքի ունի քաղաքի համայնապատկերի ընկալման բարենպաստ բարձրադիր դիտակետեր՝ Երևան-Գորիս մայրուղու վերջին հատվածից, Արցախյան մայրուղու «Ծտի բները» թաղամասին հարող հատվածից՝ քարանձավային Գորիսի բարձրադիր հատվածներից, որտեղից դիտվող կարմիր տանիքներով քաղաքի յուրահատուկ համայնապատկերը այժմ խաթարված է ոչ միայն խորհրդային շրջանում կառուցված որոշ կառույցներով, այլև վերջին տասնամյակներում սպիտակ թիթեղով կառուցած և վերանորոգված տանիքներով, ինչպես նաև պատմական կենտրոնի չբնակեցված, կիսակառույց և լքված շենքերով:

3. Վարչական տեղեկություններ

3.1 Պատասխանատու մարմիններ - տեղական ինքնակառավարման մարմիններ, Գորիսի քաղաքապետարան

3.2 Շենք/վայր, անվանում և հասցե - Գորիս քաղաք

3.3 Քարտեզին հղում - 39° 30′ 28″ N, 46° 20′ 19″ E, 39.507778, 46.338611

3.4 Հուշարձանի տեսակը

–

3.5 Սեփականության իրավունք -

Բնակելի տների սեփականատերեր, տեղական ինքնակառավարման մարմիններ

3.6 Օրենքով սահմանված պաշտպանություն/ սահմանափակումներ

-

4. Վիճակի եզրակացություն

4.1 Ֆիզիկական վիճակի եզրակացություն՝ շատ վատից մինչև լավ

Տանիքների ֆիզիկական վիճակը տարբեր է կան նաև վերարորոգած տանիքներ, կան նաև որոնք գտնվում եմ վատթար վիճակում:

4.2 Վիճակի ռիսկի գնահատում՝ գնահատվում է A-H միջակայքում

Կախված է յուրաքանչյուր առանձին դեպքից

4.3 Միջամտության առաջնահերթությունը՝ բարձր/միջին/ցածր,

Կախված է յուրաքանչյուր առանձին դեպքից

5. Առկա տեղեկություններ

5.2 Փաստագրական աղբյուրներ

Նկ.2. Բնակելի տուն, Անկախության 9

Նկ.3. Բնակելի տուն, Անկախության 20

Նկ.4. Բնակելի տուն, Անկախության 34

Նկ.5. Բնակելի տուն, Տաթևացու 11-13

Նկ.6. Ձ. Անդրանիկ 19

5.2 Օգտագործված գրականություն

- Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նածագիծ, ՀՀ Մշակույթի նախարարություն, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, Երևան 2011թ
- Հախվերդյան Ս., Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005
- Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972

5.3 Արդեն կատարված դաշտային աշխատանքներ

-

5.4 Ընթացիկ ծրագրեր

-

5.5 Արդեն պլանավորված ծրագրեր

-

5.6 Արդեն կատարված ֆինանսական հաշվարկներ

-

6. ՆՏԳ-ի շրջանակը

6.1 Գնահատման չափը/բնույթը

Սանամյան Հովհաննես– ճարտարապետ, ճարտարապետության դոցենտ

Քալանթարյան Նանար – ճարտարապետ

Աշխատանք կատարելու համար, մատավոր հաշվարկներով, ծախսվել է տասն օր:

6.2 Ուսումնասիրության սահմանափակումները

Ուսումնասիրություններկատարելու ընթացքում, փաստաթղթերին ծանոթանալու համար հիմնականում դժվարություններ չի առաջացել:

7. ՆՏԳ

7.1 Նախապատմություն՝ ձևը, գործառույթը և զարգացումը

7.1.1 Շենքի/վայրի համառոտ նկարագիրը՝ դրա քաղաքային կամ գյուղական համատեքստի վերաբերյալ նշումներով, եթե կիրառելի է:

Գորիս քաղաքը իր աշխարհագրական դիրքի շնորհիվ ունի հետաքրքիր համայնապատկեր, որը տեսանելի Երևան-Գորիս մայրուղու վերջնամասից, քաղաքի հյուսիս-արևելյան բարձրունքից: Քաղաքային բնակելի տների կարմիր թիթեղյա տանիքները ընգծվել են կանաչապատ քաղաքի փոծուղղիայաց հատակագծման մեջ:

7.1.2 Շենքի կամ վայրի՝ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը պատմական զարգացման և էվոլյուցիայի համառոտ ակնարկ:

1850-ական թվականներից Վարարակն գետի աջափնյա տարածության վրա սկսվում են Նոր Գորիսի հիմնադրման աշխատանքները: Գլխավոր հատակագիծը նախագծվում է 18-րդ դարի ռուսական քաղաքաշինությանը բնորոշ սկզբունքներով: Բնակավայրի կառուցապատման համար ընտրվում է փոխադարձաբար ուղղահայաց փողոցների ցանց, որոնց հատումից առաջանում են քառակուսի՝ 106x106 մ ու քառանկյուն՝ 106x212 մ չափերի բնակելի թաղամասեր և 212x212 մ չափերով հասարակական կենտրոն:

Բնակելի թաղամասերը, կախված չափերից, բաժանվել են 12 կամ 24 տնամերձերի, որոնք կառուցապատվել են 1-2 հարկանի առանձնատներով:

Խորհրդային շրջանում հատկապես 20-րդ դ 60-ական թթ. սկսած Գորիսն սկսում է արագ զարգանալ:

Գոյություն ունեցող ուղղանկյուն հատակագծային ցանցը տարածվում է դեպի հյուսիս և արևմուտք: Սակայն այդ տարածքներում իրականացված կառույցները թե ծավալատարածական և կերպարային թե 5-րդ ճակատի (տանիքների) լուծումներով դեռևս համահունչ էին քաղաքի պատմական կառուցապատմանը:

1960-ական թվականներից քաղաքի կենտրոնական մասում կառուցվում են չորսի-հինգ հարկանի տներ, Արթիկի վարդագույն տուֆից, որն իր հերթին խախտում է ամբողջապես տեղական բազալտից՝ թիթեղյա կարմիր տանիքներով կառուցված քաղաքի ներդաշնակ գունային գամման:

1960-1970 ական թթ. Գորիսի պատմական տարածքի հարավային մասում ստեղծվում է արդյունաբերական գոտի կառուցված, որի կառույցների ծավալատարածական, կերպարային և 5-րդ ճակատի (տանիքների) լուծումներով խաթարում են պատմական միջավայրը:

1975 – 1986 թթ. կառուցվել է լեռնային գյուղերի սանդղաձև կառուցապատման ավանդույթի օգտագործմամբ N 5 բնակելի թաղամասը՝ «Ծտի բները», որոնք իրենց մասշտաբայնությամբ և տանիքների գունային լուծումներով համահունչ էին Գորիսի պատմական կառուցապատմանը: Ցավոք այդ կառույցներում այժմ առկա են որոշ աղավաղումներ, որոնք անհրաժեշտ է վերակառուցել (հատկապես տանիքները) ըստ նախնական տեսքի:

7.2 Նշանակություն

7.2.1 Նշանակության/պատմական և ժառանգության կարևորության վերաբերյալ ամփոփ նկարագիր:

Գորիսի բնակելի տների երկայնական ճակատները՝ երկարությամբ ձգվող պատշգամբներով, ուղղվել են դեպի տնամերձ, իսկ դեպի փողոց ուղղվել են նրանց նեղ ճակատները, որոնք հաճախ ունեցել են նախշազարդ փոքր պատշգամբներ:

Բոլոր բնակելի և հասարակական կառույցներն ունեին թիթեղյա, հիմնականում քառալանջ տանիքներ՝ ներկված կարմիր գույնով:

Քաղաքի ամենաբնորոշ միջավայրը բնակելի տներով կառուցապատված փողոցն էր: Այն իրենից ներկայացնում է կամարակապ դարպասներ ունեցող պարսպապատերով միմյանց միացված, հիմնականում երկու հարկանի /երբեմն նաև մեկ/ գորիսյան ինքնատիպ բնակելի տների շարք՝ թիթեղյա կարմիր գույնի տանիքներով:

7.2.2 Գնահատման մեջ հաշվի առնվող հնարավոր կատեգորիաների ստուգացանկ:

- Պատմական
- Գեղագիտական/էսթետիկական
- Սոցիալական/քաղաքացիական

7.3 Խոցելիության/ռիսկի գնահատում

Այսօր օրենսդրական մակարդակով չի կարգավորվում տանիքների վերանորոգումն ու կառուցումը: Այդ պատճառով հանդիպում են ինքնակամ արված փոփոխություններ, որոնք բնորոշ չեն Գորիսին հատուկ ճարտարապետությանը և խաթարում են համայնապատկերը (տես նկ. 12, 13):

7.4 Տեխնիկական վիճակ

Յուրաքանչյուր կառույց պետք է դիտարկվի առանձին, քանի որ պահպանվածության աստիճանը ամեն տեղ տարբեր է:

7.5 Անհրաժեշտ վերանորոգման համառոտ նկարագիր

Պատմական համայնապատկերի վերականգնման համար ցանկալի է փոխարինել ինքնակամ վերանորոգած տանիքները կարմիր թիթեղներով: Այս գործընթացը կարող է լինել երկարաժամկետ: Պետք չէ անմիջապես նոր վերանորոգած տանիքները փոխարինել, այլ անհրաժեշտ է կարգավորել հետագա կատարվող գործողությունները, որպեսզի չխաթարեն քաղաքային միջավայրը:

7.6 Կոնսերվացման/վերականգնման քաղաքականություն և առաջարկներ

7.6.1 Վայրի տեսլականի և դրա կայունության վերաբերյալ ամփոփումը նախնական փուլում

Գորիսն ունի հետաքրքիր դիրք և Երևան Գորիս մայրուղու վերջնամասից բացվում է հետաքրքիր համայնապատկեր քաղաքին: Կարևոր է պահպանել քաղաքի 5-րդ ճակատների միասնությունը:

Տանիքների վերականգնումը նաև կարևոր է բնակիչների համար, քանի որ բնակելի տների շատ տանիքներ գտնվում են վատթար վիճակում:

7.6.2 Կոնսերվացման փիլիսոփայությունը

Անհրաժեշտ է քաղաքի կառուցապատման օրենսդրական մականդակով սահմանել տանիքների (5-րդ ճակատի) կառուցման և վերակառուցման պայմանակարգերը՝ կարմիր գույնի թիթեղյա տանիքներ, որպես պատմական համայնապատկերի վերականգնում, քանզի կարմիր տանիքները հանդիսանում են Գորիս քաղաքի այցեքարտերից մեկը: Գորիսում ի սկզբանե օգտագործվել են ոչ պրոֆիլավորված կարմիր թիրեղյա տանիքներ: Ծածկերը երբեէ չեն եղել կղմինդրից, իսկ այսօր հանդիպում են մետաղոկղմինդրե տանիքներ, որոնք ներդաշնակ չեն Գորիսի ճարտարապետությանը(տես նկ. 12, 13): Մինչ այսօր շատ կառույցների տանիքները փոխարինվել են նաև նոր Գորիսին ոչ բնորոշ կարմիր թիթեղներով: Օրինակ շատ Գորիսումպահպանված եզակի հուշարձաններից մեկը առևտրական շարքը (պասաժը) ունեցել է երկթեք տանիք: 2000թ նախաձեռնած փոփոխություններից հետո կառույցի նախնական կերպարը աղավաղվել է: Ստեղծվել է մանսարդային հարկը և տանիքը իրականացվել է մետաղոկղմինդրե ծածկով:

Այն ոչ միայն բնորոշ չէ Գորիսի ճարտարապետությանը, այլ նաև խաթարում է կառույցի ծավալատարածական հորինվացքը: Անհնար և անիմաստ կլինի նոր կառուցված խախկերը փոխարինել կարմիր թիթեղներով, սակայն հնարավոր է հսկողություն սահմանել, որ այսուհետ նորոգվող տանիքների գույնի և նյութի վրա:

7.6.3 Միջամտության մակարդակ

Խիստ հսկողություն սահմանել վերանորգվող տանիքների գործընթացին: Փոխարինել վատթար վիճակում գտնվող տանիքները:

7.6.4 Պատշաճ օգտագործման նախնական առաջարկներ, եթե կիրառելի է:

-

7.6.5 Սոցիալական կիրառումների և կայուն զարգացման հնարավորություններ

Տանիքների վերականգնումը կբարելավի տեղի բնակչության պայմանների բարելավմանը, իսկ վերևից բացվող գեղեցիկ համայնապատկեը կխթանի տուրիզմի զարգացմանը:

7.6.6 Ամրացման/ծածկապատման, վերանորոգման, կոնսերվացման, վերականգնման գերակայությունների ընդհանուր գնահատում

-

7.6.7 Հանրամատչելիություն

-

7.6.8 Այլ առավելություններ

-

7.7 Ֆինանսներ

7.7.1 Բյուջետային կարիքների ընդհանուր գնահատում և փուլայնություն

Տանիքի վերանորոգման 1 մ^2 20.000 դրամ է (38 euro): Մեկ միջին չափի տունը զբաղեցնում է մոտավորապես 250 մ^2: Ընդհանուր արժեքը կկազմի 5.000.000 դրամ (9.500 euro): Շատ մոտավոր հաշվարկներով մոտ 400 տան տանիք ունի միջամտության անհրաժեշտություն: Ընդհանուր գումարը կկազմի 2.000.000.000 դրամ (3.800.000 euro):

7.7.2 Ներդրումների ներգրավման (իրական) հնարավորությունների գնահատում

Հիմնականում աշխատանքներում պետք է ներգրավել սեփականատերերին և նաև տեղական ինքակառավարման մարմիններին:

7.7.3 Ներդրումների վերականգնման (իրական) հնարավորությունների գնահատում

-

7.7.4 Արդյոք փորձե՞լ եք միջոցներ հայթայթել տվյալ վայրի կամ հուշարձանի համար:

Եթե այո, ապա ներկայացրեք մանրամասները

-

7.7.5 Արդյոք ստացե՞լ եք միջոցներ տվյալ վայրի կամ հուշարձանի համար:

Եթե այո, ապա ներկայացրեք մանրամասները:

-

7.8 Կառավարում

8. Փաստաթղթավորում

Նկ.7. Գորիս քաղաքի համայնապատկեր՝ հյուսիս – արևելյան բարձրունքից

Նկ.8. Գորիս քաղաքի համայնապատկեր՝ հյուսիս – արևելյան բարձրունքից

Նկ.9. Գորիս քաղաքի համայնապատկեր՝ հյուսիս – արևելյան բարձրունքից

Նկ.10. Գորիս քաղաքի համայնապատկեր՝ հյուսիս – արևելյան բարձրունքից

Նկ.11. Գորիս քաղաքի համայնապատկեր՝ հյուսիս – արևելյան բարձրունքից

Նկ.12. Գորիս քաղաքի համայնապատկեր՝ հյուսիս – արևելյան բարձրունքից

Նկ.13. Առևտրային շարք (Պասաժ)

Նկ.14. Առևտրային շարք (Պասաժ)

9. Նպատակահարմարության վերաբերյալ

ՆՏԳ-ն իրականացրել է՝ Սանամյան Հովհաննես եւ Քալանթարյան Նանար: